

գող Հրեշտակներու մասին⁽³⁵⁾, որոնք թէեւ գեղեցիկ՝ բայց Անճելիքոյի նկարածներէն քիչ հոգեւոր են: Նոյնը կ'ըսեմ նաեւ Տոնաթելլոյի պարողներուն նկարմամբ⁽³⁶⁾, որոնք թէպէտ թեւերով օժտւած են՝ սակայն կը նմանին հեթանոս գինիներու (genietti)․ ու կը պարեն անսանձ, ինչ որ պիտի չյարմարէին Արքայութեան Հրեշտակներուն: Կ'ակնարկեմ նաեւ Ճիւղեփիէ Չեղարիի այն նկարները⁽³⁷⁾, ուր անոնք ձեռք ձեռքի տուած կը պարեն՝ ինչպէս շուրջպարի մէջ:

Վերոյիշեալ շողացայտները (gloria) առարկայ ունեցան նախ զԱստուած, ապա Սուրբերը: Անկէ գեղեցիկ օրինակ մը տուաւ 1500եան արուեստագէտ մը Կառտենցիոյ Ֆերրարի՝ Սարոննոյի Սրբավայրին գմբեթին մէջ տամկանկարելով Հօր Աստուծոյ փառքը: Սփռուած են Անոր կեդրոնեան ղիմագիծին շուրջ՝ դէպի վար՝ չորս պարունակներ Հրեշտակներու, առաջիններուն մէջ՝ տղայ, երկրորդներուն մէջ՝ չափահաս․ անոնք՝ երկրպագութեան, ասոնք՝ երգի եւ նուագածութեան հետ են: Վրան՝ երգիչ խումբերը զրուած են, վարը՝ նուագածուները, ասոնք ալ իրենց կարգին կը միանան իրարու՝ ըստ իրենց գործածած նուագարաններու տեսակին, որոնք են բաղխողական, չփողական, կտողական (a pizzico) եւ փչողական: Եթէ վերի բոլորակին հրեշտակիկները գրեթէ պարի ուրիշով մը գետեղուած ըլլային՝ անկէ ներդաշնակութիւն ձեռք պիտի բերուէր: Ամէն պարադայի մէջ, այս շողացայտը իր տեսակին մէջ ամէնէն գեղեցիկ արտայայտութիւնն է:

Ոչ թէ պարի համեստութիւնը՝ այլ միմիայն յղացումի ներդաշնակութիւնն է որ կը կանոնաւորէ Քորրեճիոյի գմբեթին մէջ⁽³⁸⁾ Հրեշտակներու կերպը․ անոնք ամպերու պարունակներուն մէջ Ս. Կուսի

վերելքին կ'ընկերեն երաժշտութեամբ սրինդներու, զալարափողերու (corni), ծնծղաներու, թաւջութակներու եւ ուրիշ նուագարաններու: Մոնքալիոյ, նուազ յանդուզն քան Քորրեճիոյ, կը նկարէ իր նուագածու եւ երգիչ Հրեշտակները Ս. Վիթթորէ Միլանու գմբեթին ձեղունազարդերուն (lacunari) մէջ: Երաժիշտ Հրեշտակներու ընդելուզումը կը ստեղծէ ներդաշնակ ճարտարապետութիւն մը, բայց կը վնասէ նուագախումբի ներդաշնակութեան, ինչ որ ձիովաննի Օտագցի⁽³⁹⁾ զանց կ'ընէ Ան. Յղութեան պատկերի շողացայտին մէջ, եւ անոր տեղ կը դնէ լարաւոր գործիներու, ինչպէս ջութակի եւ թաւջութակի զուգերգ մը, որ մեղի կը յիշեցնէ «սենեկի երաժշտութիւն», ոչ դահլիճի երաժշտութիւն:

Նուագող Հրեշտակներ չկան հետեւեալ գործերու շողացայտներուն մէջ՝ որոնք են. Պաչիչիոյի Յիսուսի անուան յաղթանակը⁽⁴⁰⁾, Թինթորեզիոյի արքայութիւնը⁽⁴¹⁾ Անտրէա Փոցցոյի Ս. Իգնատիոսի յաղթանակը⁽⁴²⁾, Թիէփոլոյի Ս. Տոմէնիքոյի յաղթանակը⁽⁴³⁾, Թիէփոլոյի Լորետոյի Ս. Տան փոխադրութիւնը⁽⁴⁴⁾:

Թրգմ. Իտ. է. Հ. Ղ. Տ.

ձ. ՊԵՂՆԻՍԻ

(35) Վատիկանեան Պատկերասրահ:

(36) Մայր եկեղեցի Ֆրէնցէի:

(37) Ազգային Թանգարան Նափոլի:

(38) Մայր եկեղեցի Փարմայի:

(39) Սանդա Մարիա տէլ'Օրթոյ, Հռոմ:

(40) Համանուն եկեղեցի, Հռոմ:

(41) Դքսական Պալատ, Վենետիկ:

(42) Համանուն եկեղեցի, Հռոմ:

(43) Յիսուսեանց եկեղեցի, Վենետիկ:

(44) Սքալցիներու եկեղեցի, Վենետիկ: - (Գեւորհոյակ պատկերահանիս այդ գործը մեծ պատերազմի ժամանակ թշնամի ռումբի մը զոհ եղաւ. անոր փոխանակեց հոն իտալ. ակադեմիական էթթորէ Թիթոյի մէկ յատուկ նկարը, որ կը ներկայացնէ «Ս. Կուսին Աստուածամայրութեան յաղթանակը» - Եփեսոսի Ս. Ժողով: - Մանօք. Հ. Ղ. Տ.):

Գ Ա Ր Ո Ւ Ն



Որ ուղիէն երթալ՝ ձիւնէն առաջնորդուած,
Որպէս զի ակը պատասխան տայ հոգիին.
Վերագտնել մանուկ երկիրը կորսուած
Իր անսահման գանձերուն հետ բերեղային:

Փորձել խորհուրդը բառերուն ի՛նչ աղօթքի
Պարզութիւնով կամ երազի վիշապաթեւ
Սպասումին մէջ ունենալ սիրտ մը ոսկի,
Որուն կայծերը սիրոյ բոցն են յարատեւ:

Եւ Աղբիւրէն որ ճշմարիտ կեանքի ժայռէն
Պիտի բըխի, տանիլ սափորը հոգեղէն
Տենչանքներուն՝ առանց բընաւ յադենալու.

Եւ ծարաւի՛ վերադառնալ նոյն իսկ մահուան
Կարօտը բա՛ց ճերմակ թեւին պէս նաւերու,
Որ երկընքի պարտէզներուն կը մօտենան:

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ